



**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IHSS)
ՄԱՏԱԿԱՐԱՐԻ՝ ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԱԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԲՈՂՈՔ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Դուք ունեք ձեր աշխատավայրում սեռական ոտնձգություններից զերծ մնալու իրավունք: Որպես ձեր գործատու՝ IHSS ստացողի պարտականությունն է թույլ չտալ, որ ձեր աշխատավայրում լինեն սեռական ոտնձգության դեպքեր:

Ի՞ՆՉ Է ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Գոյություն ունի սեռական ոտնձգության երկու տեսակ.

“Quid pro quo” (լատիներեն «ծառայություն ծառայության դիմաց»)՝ սեռական ոտնձգությունն այն է, երբ մեկը փորձում է ստիպել ձեզ համակերպվել կամ տեղի տալ սեռական հետապնդումներին կամ սեռական վարքի դրսևորման այլ ձևերին աշխատանքը ստանալու կամ պահելու, կամ ցանկացած այլ աշխատանքային առավելություն ձեռք բերելու համար:

«Թշնամական աշխատանքային միջավայր» տիպի սեռական ոտնձգությանը հանդիպում ենք այն դեպքում, երբ անցանկալի սեռական բնույթի արտահայտությունները կամ վարքագիծը խանգարում են ձեր աշխատանքին կամ ստեղծում են շատ անհարմար, անբարյացակամ կամ անհանգստություն պատճառող աշխատանքային միջավայր: Դուք կարող եք ենթարկվել սեռական ոտնձգությունների անգամ այն պարագայում, եթե կոպիտ և անցանկալի վարքն անմիջականորեն հենց ձեզ ուղղված չի եղել:

Սեռական ոտնձգությունն ներկայացնող վարքագիծը ներառում է ներքոնշյալը, սակայն չի սահմանափակվում դրանով.

- անցանկալի սեռական ուշադրություն,
- սեռական ծառայությունների դիմաց շահի խոստումներ,
- անձի հետ հաշվեհարդար տեսնելու սպառնալիքներ այն բանից հետո, երբ նա բացասաբար է պատասխանել սեռական ուշադրությանը,
- ակնդետ հայացքով նայելը, ինչը մարդուն անհարմարություն է պատճառում, մարմնով սեռական շարժումներ անելը կամ այնպիսի առարկաներ, նկարներ, կոմիքսներ կամ պաստառներ ցուցադրելը, որոնք մարդուն ստիպում են մտածել սեքսի մասին,
- սեռական բնույթի վիրավորանքներ կամ կոպիտ արտահայտություններ անելը,
- վիրավորական անունով դիմելը, վարկաբեկելը կամ սեքսի մասին կատակներ անելը,
- մարդուն անհարմարություն պատճառող սեռական բնույթի բառեր, արտահայտություններ, ուղերձներ կամ հրավերներ անելը,
- անցանկալի ֆիզիկական շփումը բռնաբարությունը, կամ
- անձի տեղաշարժն արգելելը կամ խոչընդոտելը:

Ունձագությունը պարտադիր չէ, որ լինի սեռական բնույթի, և կարող է ներառել նաև կոպիտ ու վիրավորական արտահայտություններ անձի սեռի կամ սեռական պատկանելության մասին: Օրինակ, անօրինական է ունձագություն կատարել կնոջ հանդեպ՝ կանանց մասին ընդհանրապես կոպիտ արտահայտություններ կատարելով:

Ե՛վ զոհը, և՛ ունձագություն կատարողը կարող են լինել թե՛ կին, թե՛ տղամարդ, ինչպես նաև և՛ զոհը, և՛ ունձագություն կատարողը կարող են լինել միևնույն սեռի/ սեռական պատկանելության:

ԻՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԱՃԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ:

Դիտե՛ք

- Չգուշացեք սեռական ունձագություն պարունակող վարքագծի դրսևորումներից կամ միջադեպերից և ձեռնպահ մնացեք դրանցից:
- Չգայուն եղեք այն անձանց հանդեպ, ովքեր կարող են վիրավորվել այլոց վերբալ ու ոչ վերբալ վարքից:
- Աչալուրջ եղեք սեռական ունձագության այնպիսի դրսևորումների հանդեպ, որոնք հեշտությամբ նկատելի չեն, ինչպիսիք, օրինակ, ակնդետ հայացքով նայելն է կամ անհարկի դիպչելը, և
- Ուշադիր եղեք, թե տանը մյուսներն ինչպես են վարվում/իրենց պահում, և մի արեք այնպիսի բան, որ կարող է բացասական ազդեցություն ունենալ այլոց հետ ձեր շփման վրա:

Ուսումնասիրե՛ք

- Ուշադիր եղեք այլոց արձագանքի հանդեպ, որպեսզի հնարավոր լինի խուսափել պատահաբար այնպիսի բան անելուց, որ կարող է նրանց անհանգստություն պատճառել:
- Մեքենաբար մի՛ մտածեք, թե որևէ մեկին դուր կգա կամ նա կցանկանա լսել սեռական բնույթի կատակներ կամ նկատողություններ իր արտաքինի մասին:
- Մեքենաբար մի՛ մտածեք, թե որևէ մեկին դուր կգա կամ կուզենա, որ իրեն դիպչեն, ակնդետ նայեն, սիրախաղ անեն, ժամադրության հրավիրեն կամ սեռական բնույթի ծառայություններ առաջարկեն:
- Հարցրեք ինքներդ ձեզ, թե արդյոք այն, ինչ ասում կամ անում եք, չի կարող բացասական ազդեցություն ունենալ ուրիշ մարդկանց զգացմունքների վրա:
- Ուսումնասիրեք ձեր վարքը, մարմնի լեզուն և արտահայտությունները: Հարցրեք ինքներդ ձեզ. «Հնարավո՞ր է, արդյոք, որ ես իմ շփման եղանակով անգիտակցաբար խրախուսում եմ սեռական ցանկություններ կամ զրույցներ»:
- Թեթև մի՛ տարեք սեռական ունձագության դրսևորումները: Եթե մտածում եք, որ որևէ անհատի կամ խմբի կողմից ձեր հանդեպ սեռական ունձագություններ են կատարվում, մի՛ ընդունեք դա իբրև կատակ: Մի խրախուսեք ունձագություն կատարողին՝ նրա

կատակների վրա ժպտալով, ծիծաղելով կամ փոխադարձ սիրախաղ անելով:
Հասկացրեք ոտնձգություն կատարողին, որ դա ձեզ դուր չի գալիս և չեք ցանկանում
այդ կարգի ուշադրության արժանանալ:

Ի՞նչ ՊԵՏՔ Է ԵՍ ԱՆԵՄ, ԵԹԵ ԻՄ ԴԵՄ ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ:

Ընդդիմացե՛ք

- Գրեք, թե ինչ է ձեզ հետ կատարվել, երբ էլ որ ձեր հանդեպ ոտնձգություն գործած լինեն: Գրի առեք հնարավորինս շատ մանրամասներ: Իմացեք ինչպես ճիշտ օրը, այնպես էլ ժամանակը, տեղը և ներգարված անձին/անձանց:
- Եթե հնարավոր է, ասացեք ձեր նկատմամբ ոտնձգություն գործադրողին, որ նա ձեզ անմիջականորեն անհանգստություն է պատճառում: Օգտագործելով ձեր մանրամասն նշումներն՝ ասացեք նրան, որ այդ կարգի ուշադրությունը ձեզ տհաճ է:
- Եթե հնարավոր է, ասացեք ձեր նկատմամբ ոտնձգություն գործադրողին, որ նրա վարքը ձեզ անհանգստացնում է և տհաճ է:
- Եթե հնարավոր է, ասացեք ձեր նկատմամբ ոտնձգություն գործադրողին, թե վարքի որ դրսևորումն է (ժեստեր, ֆիզիկական կամ վերբալ) ձեզ անհանգստացնում:
- Ի նկատի ունեցեք, որ կարող եք ձեր նկատմամբ ոտնձգություն կատարողին մի նամակ գրել, և պահեք պատճենը ձեզ մոտ:
- Եթե զգում եք, որ սեռական ոտնձգության դրսևորումները սպառնում են ձեր անվտանգությանը, հեռացեք ձեր աշխատավայրից և անհապաղ զանգահարեք 911 կամ տեղական օրինապահ մարմին:

Լուծում գտե՛ք

- Եթե չեք կարող գտնել ձեր պրոբլեմի լուծումը ձեր գործատուի/շահառուի հետ, ապա կարող եք տեղյակ պահել շրջանային գործակալությանը, որ այլևս չեք ցանկանում տնային խնամք տրամադրել տվյալ շահառուին:
- Դուք կարող եք նաև փնտրել նոր զբաղվածություն՝ գրանցվելով ձեր շրջանի IHSS-ի պետական ծրագրում: Գործակալությունը կկարողանա կապ հաստատել ձեր և նոր շահառուների միջև, որոնք խնամքի տրամադրման կարիք ունեն:
- Դուք կարող եք նաև բողոք ներկայացնել Անաչառ զբաղվածության և բնակարանային ապահովման վարչություն՝ ձեր բողոքը ներկայացնելով Վարչության Կապի կենտրոն՝ թողնելով ձայնային հաղորդագրություն 800-884-1684 համարին, կամ տպագիր հաղորդագրություն՝ ուղարկելով այն 800-700-2320 համարին, ինչպես նաև կարող եք ձեր բողոքը լրացնել առցանց www.dfeh.ca.gov/complaint-process/file-a-complaint/:
- Սեռական ոտնձգությունների կանխման վերաբերյալ ավելի շատ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող եք այցելել Անաչառ զբաղվածության և բնակարանային ապահովման վարչության (DFEH) կայքէջը՝ www.dfeh.ca.gov/resources/frequently-asked-questions/employment-faqs/sexual-harassment-faqs/: